

29.06.2015

Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և համայնքների ղեկավարների ուղեկցությամբ աշխատանքային այցով եղել է մարզի մի շարք համայնքներում: Մարզի ղեկավարը ծանոթացել է Սևաբերդ համայնքի միջնակարգ դպրոցի աշխատանքային պայմաններին, զրուցել մանկավարժների հետ, վերջիններիս հետ համատեղ քննարկել մարզի հեռավոր համայնքում առկա կրթական խնդիրներն ու վերջիններիս լուծման ուղղությամբ հանձնարարականներ տվել մարզպետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

Կ. Գուլոյանը համայնքի ղեկավարի և բնակիչների հետ քննարկել է նաև համայնքում առկա հիմնախնդիրներն ու վերջիններիս լուծման ուղղությամբ մշակված ծրագրերը:

Այնուհետև Կոտայքի մարզպետը եղել է Զառ համայնքում, այցելել տեղի միջնակարգ դպրոց, բժշկական ամբուլատորիա, ինչպես նաև ծանոթացել համայնքային այլ ենթակառուցվածքների գործունեության ուղղություններին:

Համայնքի կրթօջախում մարզպետին ներկայացվել են ուսումնական աշխատանքների կազմակերպման ընթացակարգերը, ինչպես նաև վերջիններիս արդյունավետության բարձրացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերն ու միջոցառումները:

Մարզպետը կարևորել է նաև տեղի բժշկական ամբուլատորիայի համակողմանի գործունեության հանգամանքը և նշել, որ համայնքի բնակիչների համար անհրաժեշտ է կազմակերպել պատշաճ բուժսպասարկում:

Այստեղ ևս քննարկվել են համայնքի զարգացման ծրագրում առկա աշխատանքների ընթացքն ու առաջիկայում նախատեսվող գործընթացները:

Կոտայքի մարզպետն այցելել է նաև Գեղաշեն համայնք, եղել համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնում, միջնակարգ դպրոցում, հանդիպումներ ունեցել ինչպես հիշյալ հաստատությունների աշխատակիցների, այնպես էլ համայնքի բնակիչների հետ:

Մարզպետն ընդգծել է համայնքային առօրյայում պարբերաբար դրական զարգացումներ գրանցելու կարևորությունը և նշել, որ այդ ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան գործողություններ: Այցելությունների հաջորդ կանգառը եղել է Զովք համայնքը, որտեղ ևս մարզի ղեկավարը ծանոթացել է համայնքային կառույցների աշխատանքային ուղղություններին, հանդիպում ունեցել տեղի միջնակարգ դպրոցի ուսուցիչների հետ, պատասխանել նրանց հարցերին և վերջիններիս հետ համատեղ քննարկել կրթական գործընթացներին վերաբերող մի շարք խնդիրներ:

Կ. Գուլոյանին ներկայացվել են նաև Զորաղբյուր համայնքի առօրյայի և տեղում գործող մարզային ու համայնքային ենթակայության հաստատությունների աշխատանքային ուղղությունները:

Մարզպետը եղել է Զորաղբյուրի դպրոցում, այստեղ ևս հանդիպում է ունեցել մանկավարժների հետ, պատասխանել բարձրացվող հարցերին, ինչպես նաև անդրադարձ կատարել կրթօջախի արդյունավետ գործունեության կարևորություններին:

Զորաղբյուրի առողջության առաջնային կենտրոնում Կ. Գուլոյանը ծանոթացել է աշխատանքային պայմաններին, ինչպես նաև բուժօժանայությունների մատուցման հիմնական մոտեցումներին:

Մարզի ղեկավարը շրջել է նաև Զորաղբյուրի մանկապարտեզում, զրուցել հաստատության պատասխանատուների հետ:

Կոտայքի մարզպետի համայնքային այցելությունների այս շարքն ավարտվել է Զրվեժ համայնքում:

Մարզպետը եղել է համայնքի միջնակարգ դպրոցում, երաժշտական և մարզադպրոցներում հանդիպումներ ունեցել մանկավարժների հետ:

Զրվեժի առողջության առաջնային պահպանման կենտրոնում ևս Կ. Գուլոյանը կարևորել է համայնքի ազգաբնակչության լիարժեք բուժսպասարկման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը:

Զրվեժում ևս քննարկվել են համայնքի շարունակական զարգացմանն որոշակի ուղղված ծրագրային առաջնահերթություններ: